# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե : , ՀՀ, ՄԵԾԱՄՈՐ
49
Հեռախոս: 34441
Ֆաքս: 34441

Ելից ______
01 փետրվարի 2013թ.
Ձեր ______

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ եմ ներկայացնում Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու թիվ 01 նիստի թիվ 03-Ն որաշման քաղվածքը:

Առդիր՝ 63 թերթ:

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ ՄԲ/896-13
«01» 02 2013թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 01 նիստի արձանագրության

թիվ 03-Ն որոշումից, կայացած 2013 թվականի հունվարի 25-ին

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 02 նիստի «Մեծամոր քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 12-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1 Ի լրումն Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու թիվ 02 նիստի, կայացած 12.12.2012 թվականին՝ 2013 թվականի բյուջեում ընդգրկել տարեսկզբի ազատ մնացորդը՝ վարչական բյուջեի մնացորդ՝(6716,5) հազար դրամ, ֆոնդային բյուջեի մնացորդ՝(1132,3) հազար դրամ:

1.2 Վարչական բյուջեի ծախսային մասում նախորդ տարվա պարտքերը մարելու համար նախատեսնել «Ընդհանուր բնույթի ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4212 հոդվածին 200,0 հազար դրամ, 4214 հոդվածին 54,0 հազար դրամ, բաժին 01, խումբ 3, դաս 2, 4232 հոդվածին 60,0 հազար դրամ, բաժին 01, խումբ 6, դաս 1, 4729 հոդվածին 220,0 հազար դրամ, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06, խումբ 1, դաս 1, 4511 հոդվածին 4922,5 հազար դրամ, բաժին 06, խումբ 4, դաս 1, 4212 հոդվածին 1000,0 հազար դրամ, «Առողջապահություն» ծրագրի բաժին 07, խումբ 3, դաս 1, 4729 հոդվածին 65,0 հազար դրամ, «Հանգիստ, մշակույթ, կրոն» ծրագրի բաժին 08, խումբ 2, դաս 3, մշակույթի տան 4212 հոդվածին 95,0 հազար դրամ, բաժին 08, խումբ 3, դաս 1, 4234 հոդվածին 100,0 հազար դրամ:

1.3 Ֆոնդային բյուջեի ծախսային մասում նախատեսնել «Ընդհանուր բնույթի ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 1, դաս 1, 5122 հոդվածին 361,5 հազար դրամ, «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ծրագրի բաժին 05, խումբ 6, դաս 1 5112 հոդվածին 770,8 հազար դրամ՝ ոռոգման ջրագծի անցկացման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | |
|---|---|---|
| Արտենյան | Արմեն | Ռուբենի |
| Գաբոյան | Գնել | Մկրտիչի |
| Հովհաննիսյան | Գևորգ | Հենրիկի |
| Հովհաննիսյան | Հայկ | Թաթուլի |
| Հովհաննիսյան | Հերմեն | Սուրենի |
| Ղուլիջանյան | Մասիս | Սիմոնի |
| Ղումաշյան | Սուրեն | Էդվարդի |
| Մարտիրոսյան | Արարատ | Քյարամի |
| Մկրտչյան | Աշոտ | Մկրտիչի |
| Մնոյան | Կարապետ | Նորիկի |
| Փոթուրյան | Մեսրոպ | Խաչիկի |

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ